

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբոյանի և Մկրտիչ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի.

1. Վերնագրում և տեքստում «երեխաների կրծքով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «երեխաներին կրծքով» բառերով:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին:

2. 1-ին հոդվածի 1-ին մասում «կարգավորվում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կարգավորվում են» բառերով:

3. 4-րդ հոդվածի՝

1) համաձայն՝ մանկական հավելյալ սնունդ է համարվում նաև վաղ տարիքի երեխաների (12 ամսականից մինչև 36 ամսական) համար նախատեսված սնունդը: Ստացվում է, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում, որպես հավելյալ սնունդ, կարող է դիտարկվել և արգելվել նաև ցանկացած կաթի, հյութի, յոգուրտների գովազդը.

2) անհրաժեշտ է հանել «լիազոր մարմին» հասկացությունը:

4. 5-րդ հոդվածում՝

1) «կառավարության» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերով.

2) 1-ին մասի 1-ին կետի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ թե հաստատում, այլ մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված պահանջը, որը սահմանում է. «Կառավարությունն իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում:».

3) մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 11-րդ, 17-րդ, 22-րդ հոդվածներին, ինչպես նաև 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պարբերություններին:

5. 6-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը «նկատմամբ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում» բառերով, քանի որ սննդի (այդ թվում՝ նաև մանկական սննդի) և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում վերահսկողություն կարող են իրականացնել և պատժամիջոցներ կիրառել մի քանի պետական մարմիններ՝ յուրաքանչյուրն իր մասով: Նույն դիտողությունը վերաբերում է նույն հոդվածի 5-րդ մասին.

2) 5-րդ մասը «ոլորտում» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում» բառերով.

3) 6-րդ մասում պարզ չէ մանկական սննդի և հարակից ապրանքների գրանցման իրավական բովանդակությունը:

6. 8-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կրճքով սնուցման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են լիազոր մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով».

2) 2-րդ և 3-րդ մասերի դրույթները չեն համապատասխանում հոդվածի վերնագրի պահանջին, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին.

3) 2-րդ և 3-րդ մասերում խոսք է գնում տեղեկատվական և ուսուցողական նյութերի հրապարակման մասին, մինչդեռ պարզ չէ, թե ում կողմից, ինչ կարգով և որտեղ պետք է դրանք հրապարակվեն.

4) 3-րդ մասում պարզ չէ, թե ինչ «արգելելու» մասին է խոսքը և լիազոր մարմինն ինչ կարգով է այն իրականացնելու: Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ գտնում ենք, որ օրենքի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի հրատարակումն ու տարածումն արգելելու կարգին վերաբերող դրույթները պետք է սահմանվեն սույն օրենքի նախագծով:

7. 9-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը հանել, քանի որ տվյալ կետով կարգավորվող հարցն արդեն իսկ կարգավորվում է նախագծին կից ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով.

2) 4-րդ կետում սահմանվում է մանկական սննդի և հարակից ապրանքներից նմուշներ վերցնելու և փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ դրույթները: Նշված է, որ մանկական սննդի և հարակից ապրանքներից նմուշներ վերցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սակայն փորձաքննության կարգի մասին խոսք չկա:

8. 13-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետում «հաստատությունների կողմից» բառերը փոխարինել «հաստատություններում կամ հաստատությունների կողմից» բառերով,

բ. 4-րդ կետում նշված «համապատասխան պայմաններ չունեցող առևտրային կետերի» հասկացությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին,

գ. 3-րդ կետի և 14-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետերից հանել «և իբրև այդպիսին ներկայացվող» բառերը, քանի որ խոսքը վերաբերում է մինչև 6 ամսական մանուկներին առաջարկվող հյութերին, թեյին, որոնք չեն կարող ներկայացվել իբրև կաթնախառնուրդ.

2) 2-րդ մասում «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

9. 14-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող սահմանափակումը հակասում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատար-

րելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին, քանի որ մի դեպքում խոսքը գնում է մանկական սննդի և հարակից ապրանքների գովազդն առևտրի վայրերում, առողջապահական հաստատություններում և այլ վայրերում արգելելու մասին, որը ենթադրում է, որ այն կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, մինչդեռ մյուս դեպքում խոսք է գնում մանկական սննդի և հարակից ապրանքների գովազդի արգելման մասին: Այդ կապակցությամբ առաջարկում ենք նախագծի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մանկան և վաղ հասակի երեխաների համար նախատեսված կաթնախառնուրդների և հարակից ապրանքների գովազդը և խրախուսումն արգելվում է»:

10. 16-րդ հոդվածի 1-ին մասում «բուժաշխատող» բառից առաջ լրացնել «մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված» բառերով, քանի որ կան բուժաշխատողներ, որոնք ընդգրկված են կաթնախառնուրդ արտադրող կամ բաշխող կազմակարպությունների աշխատակազմում:

11. 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում կոռոպցիոն գործոնը բացառելու համար հստակեցման կարիք ունի, թե մանկական սնունդն ու հարակից ապրանքներն ում կողմից պետք է տրամադրվեն.

2) 1-ին մասի 1-ին կետում «ծնողական խնամքից զուրկ մնացած երեխաների համար» բառերն անհրաժեշտ է փոխարինել «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար» բառերով.

3) 3-րդ կետն առաջարկում ենք հանել:

12. 18-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 2-րդ կետը «սնունդը,» բառից հետո լրացնել «ընդ որում հավելյալ սնուցման համար նախատեսված դեպքերում նշված տարիքը չպետք է փոքր լինի 6 ամսականից» բառերով,

բ. 4-րդ կետում «կաթ» բառն անհրաժեշտ է փոխարինել «կաթի» բառով,

գ. 7-րդ կետում «հասցեն» բառն անհրաժեշտ է փոխարինել «գտնվելու վայրը» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 59-րդ հոդվածի պահանջը:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին.

2) 2-րդ մասի՝

ա. 2-րդ կետում պարզաբանման կարիք ունի «այլ նմանականացում ենթադրող» արտահայտությունը, մասնավորապես՝ անհրաժեշտ է նախագծով հստակ նախատեսել կրծքի կաթի հետ «նմանականացում ենթադրող կամ համեմատող» արտահայտությունները,

բ. 5-րդ կետում պարզ չեն «նմանեցման» չափանիշները:

13. Անհրաժեշտ է տարանջատել 20-րդ հոդվածով նախատեսված բժշկական հաստատությունների և բուժաշխատողների պարտականությունները:

Բացի դրանից, 1-ին մասի 2-րդ կետում «ապահովումը» բառն անհրաժեշտ է փոխարինել «կազմակերպումը» բառով:

14. Նախագծում անտեսված է այն հանգամանքը, որ նախագծի կարգավորման ոլորտում գործառույթներ և դրանց նկատմամբ վերահսկողության պահանջներն իրականացնող լիազոր մարմինները տարբեր են: Անհրաժեշտ է առանձնացնել երեխաների կրծքով սնուցման խրախուսման վերաբերյալ դրույթները մանկական սննդի շրջանառության վերաբերյալ դրույթներից և ըստ այդմ խմբագրել նախագծի 6-րդ և 8-րդ հոդվածները:

15. 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետը, 17-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ կետերը և 20-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 5-րդ ենթակետերը ենթադրում են բյուջետային լրացուցիչ հատկացումների անհրաժեշտություն, ինչը նախատեսված չէ 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և նախագծի ընդունման դեպքում դրանք կմնան առանց ֆինանսական ապահովման:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ այլ առաջարկություններ չունենք:

«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անհրաժեշտությունը չկա, քանի որ նույն օրենքով մանկական սնունդը դասվում է հատուկ նշանակության սննդամթերքի շարքում և դրա անվտանգության նկատմամբ պետական վերահսկողությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական

ծառայությանը: Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է մշակել մանկական սննդի չափորոշիչներ: Բացի դրանից՝

1) 1-ին և 2-րդ հոդվածներում «օրենքով» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերով:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-ին հոդվածներին:

2) 2-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով փաթեթավորմանը ներկայացվող պահանջներ սահմանված չեն: Առաջարկում ենք հոդվածից հանել «և փաթեթավորմանը» և «հարակից ապրանքներ» բառերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը հակասում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայումս իրականացվող տեսչական բարեփոխումների քաղաքականությանը, մասնավորապես, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգին: Բացի դրանից՝

1) 1-ին հոդվածի տեքստը բովանդակային առումով անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը: Մասնավորապես՝ «ստուգումները և» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ստուգումների» բառով.

2) 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով, քանի որ նախագծի տեքստում միայն մեկ լրացում է նախատեսված.

2) 1-ին հոդվածում անհրաժեշտ է հստակ նշել, թե օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետում որ բառից կամ նախադասությունից հետո է նախատեսվում լրացումը:

Նույն հոդվածում «բովանդակությամբ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «նոր» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ 1-ին հոդվածում «հետևյալ նախադասությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, իսկ «Կինը» բառը՝ «Կինն» բառով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառող մարմինները տարբեր են, ուստի նախագիծն այս տեսքով ընդունելի չէ: Միաժամանակ՝ 2-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենսգրքում նախատեսված չէ 44.14-րդ հոդված: Բացի դրանից, նույն հոդվածում «բառերից» բառն անհրաժեշտ է փոխարինել «թվից» բառով, իսկ «բառերը» բառը՝ «թիվը» բառով:

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «գովազդը» բառն անհրաժեշտ է փոխարինել «գովազդն» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունելի կհամարի ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը՝ իր կողմից ներկայացված առաջարկություններն ընդունվելու դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը:

Ներկայացնում ենք օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ընդունումից հետո դրանց կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - 12 ամիս.

2) 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասեր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն - 12 ամիս.

3) 8-րդ հոդվածի 2-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - 6 ամիս.

4) 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - 10 ամիս.

5) 10-րդ հոդվածի 1-ին մաս՝ ՀՀ կառավարության որոշում - 10 ամիս.

6) 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն - 12 ամիս.

7) 18-րդ հոդվածի 3-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - 12 ամիս.

8) 19-րդ հոդվածի 3-րդ մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում - 10 ամիս:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», « Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի

1. Նախագծի կարգավորման արդյունքները.

առաջարկվող նախագծերի ընդունման դեպքում կարգավորման արդյունքները կլինեն հետևյալը.

1) Նախագծերի փաթեթի ընդունումը կնպաստի կրծքով սնուցման ցուցանիշի բարձրացմանը և դրան խոչընդոտող գործոնների ազդեցության նվազեցմանը, ինչը վերջնական արդյունքում կհանգեցնի վաղ հասակի երեխաների հիվանդացության և մանկական մահացության ցուցանիշի նվազեցմանը:

2) Օրենսդրական այս փոփոխությունները բյուջետային որևէ նոր պարտավորություն չի առաջացնի:

3) Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում երկիրը լիարժեք կիրականացնի «Կրծքի կաթի փոխարինիչների վաճառահանման միջազգային օրենսգրքին» միանալու վերաբերյալ իր կողմից ստանձնած պարտավորությունները, կապահովի երեխայի առողջ աճի և զարգացման նախադրյալ հանդիսացող կրծքի կաթով սնվելու նրա իրավունքը:

2. Նախագիծը չընդունելու դեպքում առողջապահության բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները.

Նախագիծի չընդունման արդյունքում հավանաբար նույն մակարդակին կմնա կամ կնվազի կրծքով սնուցման ցուցանիշը, ինչը կարող է նպաստել վաղ հասակի երեխաների հիվանդացության ու մանկական մահացության մակարդակի որոշակի աճին:

3. Մոր և մանկան առողջության պահպանման բնագավառում վարվող քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական տվյալները.

մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականությունը հենվում է ՀՀ Կառավարություն կողմից հավանության արժանացած «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարության» վրա, որտեղ որպես կանոնադրույն խնդիր ամրագրված է կրծքով սնուցման խրախուսումը: Այն որպես գերակա խնդիր կարևորված է նաև երկրի հիմնական ռազմավարական փաստաթղթում՝ «Կայուն զարգացման ծրագրում»:

1995թ. ի վեր «Կրծքով սնուցման խրախուսման ծրագրի» շրջանակներում իրականացվող միջոցառումների շնորհիվ մինչև 4 ամսական երեխաների կրծքով կերակրման ցուցանիշը բարձրացել է ավելի քան 3,5 անգամ, հասնելով 2004 թ. 72%-ի, սակայն վերջին տարիներին այն պարբերաբար դրսևորել է նվազման միտում, ինչը կապված է նաև կաթնախարնուրդ արտադրող և/կամ բաշխող կազմակերպությունների կողմից իրենց արտադրանքի սպառման խրախուսման արգելված ձևերի ակտիվացման հետ: Այս դաշտի օրենսդրական կարգավորումը մեծապես կնպաստի բուժաշխատողների գործելակերպի բարելավմանը, մանկան սնուցման հարցերում հանրային իրազեկման և մայրերի/խնամողների գիտելիքների և հմտությունների բարձրացմանը:

4. Նախագծի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.

Նախագծերի ընդունումից հետո կանխատեսվող հետևանքները հնարավոր կլինի գնահատել օրենքներից բխող իրավական ակտերի մշակումից և կիրարկումից հետո մեկից երեք տարի անց:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին>>, <<Մննդամթերքի անվտանգության մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Սպառողների իրավունքների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> և <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին>>, <<Մննդամթերքի անվտանգության մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Սպառողների իրավունքների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> և <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի փաթեթի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերի փաթեթը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքների նախագծերի փաթեթի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

1. «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի դրույթներում առկա են ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված կոռուպցիոն գործոններ, մասնավորապես՝ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված երեխաներին մանկական սնունդը և հարակից ապրանքները լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարող են տրամադրվել անվճար կամ ցածր գներով: Նշված հոդվածի 1-ին մասում մանկական սնունդ և հարակից ապրանքներ տրամադրողի լիազորությունները սահմանված են ոչ հստակ, ինչն առաջացնում է ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կոռուպցիոն գործոնը:

2. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

<<Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին>>, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, << Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Սպառողների իրավունքների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> և <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագծերն ունեն դրական ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է բացասական ազդեցություն:

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանվում են վերահսկողության նպատակով մանկական սննդի և հարակից ապրանքների ներմուծման, արտադրության, պահեստավորման, վաճառքի, խրախուսման գործունեություն իրականացնող ցանկացած տնտեսվարող սուբյեկտի տարածք առանց նախապես զգուշացնելու մուտք գործելու, փաստաթղթեր պահանջելու իրավասություններ, ինչը հակասում է տեսչական գործընթացների ոլորտում ՀՀ կառավարության կողմից վարվող ներկայիս քաղաքականությանը և կհանգեցնի վարչարարության ավելացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

մի շարք օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում

կարգավորման ազդեցության գնահատման

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մանդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) խրախուսվում է երեխաների կրծքով սնուցումը, և արգելվում է մանկական սննդի և հարակից ապրանքների գովազդը:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են *մանկական սննդի և հարակից ապրանքների շուկաների* հետ:

Ազդեցության գնահատման բուն գործընթացում պարզվել է, որ վերոնշյալ ապրանքների գովազդի լիակատար արգելքը բասացաբար է անդրադառնում մանկական սննդի և հարակից ապրանքների շուկաներում մրցակցային միջավայրի վրա՝ սահմանափակելով մատակարարների միմյանց հետ մրցելու հնարավորությունը: Սակայն հաշվի առնելով, որ ներկայումս «Գովազդի մասին» ՀՀ օրենքով մանկական սննդի և հարակից ապրանքների գովազդի նկատմամբ գործում են մի շարք սահմանափակումներ, Նախագծերի ընդունմամբ ներկայիս մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցությունը զգալի չի լինի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ոչ զգալի բասացական ազդեցություն* հայտնաբերվելու եզրակացություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության
մասին****Գլուխ 1****Ընդհանուր դրույթներ*****Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան***

1. Սույն օրենքով կարգավորվում է երեխաների կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության հետ կապված հարաբերությունները:
2. Օրենքով կարգավորվում են մանկական սննդի և հարակից ապրանքների արտադրության, պիտակավորման, վաճառքի, բաշխման, գովազդի և որևէ այլ ձևով խրախուսման, ինչպես նաև դրանց մասին իրազեկման և տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակն է ապահովել մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցումը՝ կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության կարգավորման միջոցով:

Հոդված 3. Օրենքի խնդիրները

1. Խրախուսել, պաշտպանել և աջակցել կրծքով սնուցումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (ադեկվատ) սնուցում ապահովելու համար:
2. Խրախուսել, պաշտպանել և աջակցել բացառապես կրծքով սնուցումը՝ որպես մանուկների սնուցման միջոց:
3. Խրախուսել և աջակցել ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցման ապահովումը:
4. Իրազեկել հանրությանը, ներառյալ հղիներին, նրանց ընտանիքներին, երեխաներին խնամողներին և դայակներին կրծքով սնուցման առավելությունների, արհեստական կաթնախառնուրդների օգտագործման և ոչ ճիշտ օգտագործման վտանգների վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն:
5. Խրախուսել և աջակցել մայրերի, մանուկների և վաղ տարիքի երեխաների համար բարյացակամ միջավայրի ապահովումը առողջապահական հաստատություններում, հասարակական վայրերում և աշխատավայրերում:

6. Կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության հետ կապված օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

7. Խրախուսել, պաշտպանել եւ աջակցել կրծքով սնուցումը՝ որպես աղքատության հաղթահարման արդյունավետ միջոց:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հասկացություններն են՝

կրծքով սնուցման խրախուսում՝ միջոցառումներ ուղղված մանուկներին եւ վաղ տարիքի երեխաներին մայրական կաթով սնուցման իրականացմանը.

մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառություն՝ մանկական սննդի եւ հարակից ապրանքների արտադրություն, պիտակավորում, վաճառք, բաշխում, գովազդ եւ որեւէ այլ ձեռով խրախուսում, ինչպես նաեւ դրանց մասին իրազեկման եւ տեղեկությունների տարածում.

մանկան կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կաթի նման արտադրանք, որը նախատեսված է մանուկների սնուցման համար՝ սկսած ծննդյան պահից մինչեւ 6 ամսեկան տարիքը.

վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կաթի նման արտադրանք, որը նախատեսված է վեց ամսեկանից բարձր տարիքի մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման համար.

հավելյալ սնունդ՝ 6 ամսեկանից բարձր մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնունդ, նախատեսված ի հավելումն կրծքի կաթի եւ մանկական կաթնախառնուրդների օգտագործմանը.

լրացուցիչ սնունդ՝ բժշկական ցուցումներով մայրական կաթի անբավարարության դեպքում մանուկներին եւ վաղ տարիքի երեխաներին կաթով կամ արհեստական կաթնախառնուրդներով սնուցում.

մանկական սնունդ՝ մանուկների եւ վաղ տարիքի երեխաների համար նախատեսված սնունդ, որը ներառում է մանկան կաթնախառնուրդը, վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդը եւ հավելյալ սնունդը.

հարակից ապրանքներ՝ մանկական սնունդ սպառողին հասցնելու եւ/կամ երեխային սնուցելու համար նախատեսված տարաներ, այդ թվում կերակրման շէր, ինչպես նաեւ երեխաներին սնուցելու եւ հանգստացնելու նպատակով օգտագործվող արհեստական ծծակներ.

մանուկ՝ մինչեւ 12 ամսեկան երեխա.

վաղ տարիքի երեխա՝ 12 ամսեկանից մինչեւ 3 տարեկան (36 ամսեկան) երեխա.

մանկական սննդի եւ հարակից ապրանքների տարա՝ փաթեթավորման ցանկացած ձեւ, որն իրենից ներկայացնում է մանրածախ վաճառքի մեկ միավոր, ներառյալ թղթե փաթեթները.

արտադրող՝ իրավաբանական կամ անհատ ձեռնարկատեր, որը զբաղվում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների արտադրությամբ.

բաշխող՝ իրավաբանական կամ անհատ ձեռնարկատեր, որը զբաղվում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների մեծածախ ու մանրածախ վաճառքով եւ բաշխմամբ, եւ դրանց սպառման խրախուսմամբ.

մանկական սննդի եւ հարակից ապրանքների խրախուսում՝ մանկական սննդի եւ հարակից ապրանքների սպառման ուղղակի կամ անուղղակի նպատակաուղղված գործունեություն.

մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշ՝ խրախուսման նպատակով մանկական սննդի եւ հարակից ապրանքների անվճար տրամադրվող մեկ միավոր կամ փոքր քանակություն.

մանկական սննդի եւ հարակից ապրանքների պիտակ՝ նշանակում է պիտակ, նշան, պատկերավոր կամ այլ նկարագրական նյութ՝ գրված, տպված, զարդանախշված, տրաֆարետով ներկված, դրոշմված, քանդակադրոշմված, որը փակցված է կամ այլ ձեռով հանդես է գալիս մանկական սննդի եւ հարակից ապրանքների վրա.

նորածիններին բարյացակամ ծառայություններ՝ բժշկական հաստատություններում հղի կանանց, մայրերի եւ մանուկների խնամքի զարգացմանը եւ կրծքով սնուցման աջակցությանը ուղղված միջոցառումներ.

լիազոր մարմին՝ առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին:

Գլուխ 2

Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պետական կառավարումը

Հոդված 5. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում կառավարության իրավասությունները

Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում Կառավարության իրավասություններն են՝

1. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պետական քաղաքականության հաստատումը,
2. Սույն ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման համար միջոցների ձեռնարկումը,
3. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում միջգերատեսչական համագործակցության ապահովումը:

Հոդված 6. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը,

2. Կրժքով սնուցման խրախուսման ազգային ծրագրի եւ այլ ծրագրերի մշակումը եւ իրականացումը,
3. Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը եւ մշտադիտարկումը,
4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության հետ կապված նորմատիվ ակտերի ընդունումը,
5. Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պատասխանատվության կիրառումը,
6. Իրականացնում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների օրենսդրության սահմանված կարգով գրանցումը:

Հոդված 7. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների համապատասխանության հավաստումը

Մանկական սնունդը ու հարակից ապրանքները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման՝ «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Գլուխ 3

Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը

Հոդված 8. Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողությունը իրականացնում է լիազոր մարմինը:
2. Մանկական սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին տեղեկատվական եւ ուսուցողական նյութերի պատճենները մինչեւ դրանց հրապարակումը ենթակա են համաձայնեցման լիազոր մարմնի հետ: Համաձայնեցման կարգը սահմանում է կառավարությունը:
3. Լիազոր մարմինը իրավունք ունի արգելել սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին տեղեկատվական եւ ուսուցողական նյութերի հրապարակումը եւ տարածումը:

Հոդված 9. Կրժքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց իրավունքները

1. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք իրավունք ունեն.

1) վերահսկողության նպատակով առանց նախապես զգուշացման մուտք գործել մանկական սննդի եւ հարակից ապրանքների ներմուծման, արտադրության, պահեստավորման, վաճառքի, գովազդի, խրախուսման գործունեություն իրականացնող ցանկացած տնտեսվարող սուբյեկտի տարածքները,

2) պահանջել փաստաթղթեր,

3) զննել համապատասխան ապրանքները, դրանց պիտակները,

4) կառավարության կողմից սահմանված կարգով վերցնել նմուշներ եւ ներկայացնել դրանք փորձաքննության համար,

5) քննարկել սույն օրենքի խախտումները,

6) իրավասու մարմիններին ներկայացնել առաջարկություններ սույն օրենքի եւ դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտումները վերացնելու եւ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

2. Կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով:

Գլուխ 4

Կրծքով սնուցման խրախուսումը

Հոդված 10. Կրծքով սնուցման խրախուսման Ազգային ծրագիր

1. Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների անվտանգ եւ համապատասխան (աղելվատ) սնուցում ապահովելու նպատակով կառավարությունը հաստատում է կրծքով սնուցման խրախուսման ազգային ծրագիրը:

2. Կրծքով սնուցման խրախուսման ազգային ծրագրով սահմանվում են՝

1) կրծքով սնուցման քարոզչությանն ուղղված միջոցառումները,

2) կրծքով սնուցման տեղեկատվության հավաքագրումը եւ վերլուծությունը,

3) կրծքով սնուցման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթությանն ուղղված միջոցառումները,

4) բժշկական հաստատություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրումը,

5) կերակրող մայրերի եւ նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծումը,

6) հանրային իրազեկվածության բարձրացումը, ներառյալ հղիներին եւ նրանց ընտանիքներին,

7) միջգերատեսչական համագործակցությունը:

Հոդված 11. Երեխայի կրծքով սնուցման իրավունքը

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ստանալ կրծքով սնուցում որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց անվտանգ և համապատասխան (ադեկվատ) սնուցում ստանալու համար:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի զերծ մնալ կծքով սնուցումից բժշկական հակացուցումների առկայության դեպքում, որոնց ցանկը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կենսաբանական ցուցումներով 6 ամսեկանից ստանալ հավելյալ սնուցում, իսկ բժշկական ցուցումներով՝ լրացուցիչ սնուցում: Հավելյալ և լրացուցիչ սնուցում ստանալու մեթոդական ուղեցույցները հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

Պետությունը միջոցներ է ձեռնարկում կրծքով սնուցման խրախուսման, կրծքով սնուցում իրականացնող կանանց և երեխաների իրավունքները պաշտպանելու համար:

Հոդված 12. Կրծքով սնուցում իրականացնող կանանց իրավունքները

1. Կրծքով սնուցում իրականացնող կինը իրավունք ունի.

1) կրծքով սնուցել իր երեխային,

2) ունենալ համապատասխան պայմաններ աշխատավայրերում, քրեակատարողական, բժշկական հաստատություններում և այլ հասարակական վայրերում կրծքով սնուցում իրականացնելու համար,

3) ստանալ տեղեկատվություն կրծքով սնուցման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ,

4) ստանալ կրծքով սնուցման ապահովման հետ կապված բժշկական խորհրդատվություն և բժշկական օնություն:

Գլուխ 5

Մանկական սննդի և հարակից ապրանքների իրացման կարգավորումը

Հոդված 13. Մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը

1. Արգելվում է.

1) Մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը բժշկական հաստատությունների կողմից:

2) Համապատասխանության պարտադիր հավաստում չանցած կամ պիտանելիության ժամկետը անց մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը:

3) Մինչև վեց ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող և իբրև այդպիսին ներկայացվող սննդամթերքի վաճառքը:

4) Մանկական սննդի եւ հարակից ապրանքների պահպանման համար համապատասխան պայմաններ չունեցող առեւտրային կետերի կողմից դրանց վաճառքը:

2. Սույն հոդվածի առաջին կետով նախատեսված պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 14. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների գովազդը եւ խրախուսումը

1. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների գովազդը եւ խրախուսումը առեւտրի օբյեկտներում, առողջապահական հաստատություններում կամ այլ վայրերում արգելվում է:

2. Խրախուսման արգելված ձեւերը ընդգրկում են՝

1) գովազդը,

2) գեղչային հնարքները, ինչպիսիք են՝ հատուկ ցուցահանդես-վաճառքները, շնորհանդեսները, շահումները, հատուկ վաճառքները, պարգեւների, մրցանակների, նվերների շնորհումը, գեղչերը եւ գեղչի կտրոնների կիրառումը, իջեցված գներով վաճառքը՝ բացառությամբ այն դեպքերի, որ իջեցված գներով վաճառքը բխում է արտադրողի կամ բաշխողի գնային քաղաքականությունից եւ ուղղված է գների երկարատեւ (ոչ պակաս քան վեց ամիս) իջեցմանը.

3) մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշների տրամադրումը,

4) մանկական սննդի եւ հարակից ապրանքների սպառման ավելացմանն ուղղված խրախուսման ցանկացած այլ հնարք,

5) մինչեւ վեց ամսական մանուկների համար մանկան կաթնախառնուրդ չհանդիսացող եւ իբրեւ այդպիսին ներկայացվող սննդամթերքի գովազդը եւ խրախուսումը:

Հոդված 15. Արտադրողների եւ բաշխողների կողմից խրախուսման արգելքը

1. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների խրախուսումը արտադրողների եւ բաշխողների կողմից արգելվում է:

2. Արգելվում է արտադրողի կամ բաշխողի կողմից մասնավորապես հետեւյալ խրախուսման եղանակները՝

1) բուժաշխատողներին կամ առողջապահական կազմակերպություններին մանկական սնունդ եւ հարակից ապրանքներ նվիրելը կամ դրանք տրամադրելը հայտարարված մեծածախ գնից կամ մեծածախ գնի բացակայության դեպքում, մանրածախ գնի ութսուն տոկոսից ցածր գնով, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված դրույթի.

2) մանկական սննդի եւ հարակից ապրանքների օգտագործման խրախուսման նպատակով առողջապահական կազմակերպությանը անվճար սարքավորումներ, պարագաներ տրամադրելը կամ ծառայություններ մատուցելը.

3) բուժաշխատողներին եւ առողջապահական կազմակերպություններին նվերներ՝ այդ թվում գրիչներ, օրացույցեր, պաստառներ, հուշատետրեր, նոթատետրեր,

հասակաչափեր, մանկան աճի կամ զարգացման գրաֆիկներ, խաղալիքներ տրամադրելը.

4) բուժաշխատողներին կամ բուժաշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին կամ արհեստակցական միություններին դրամական հատկացումներ տրամադրելը կամ առաջարկելը (սվիրատվություններ, հոնորարներ մատուցված ծառայությունների համար, գիտահետազոտական աշխատանքների անցկացման դիմաց հատուցումներ, հետազոտական դրամաշնորհներ կամ հանդիպումների, սեմինարների, շարունակական ուսուցողական դասընթացների կամ գիտաժողովների հետ կապված դրամային հատկացումներ, եւ այլն).

5) հղի կանանց կամ կերակրող մայրերի, մանուկների եւ վաղ տարիքի երեխաների ծնողների կամ նրանց ընտանիքների անդամների համար ծնելիության, հղիության, երեխայի ծննդի, կրծքի եւ վաղ հասակի երեխաների սնուցման եւ հարակից խնդիրների հետ առնչվող իրադարձություններ, միջոցառումներ, մրցույթներ, խորհրդակցման հեռախոսագծերի գործունեություն կամ արշավներ հովանավորելը.

6) մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման հետ առնչվող տեղեկատվական կամ ուսուցողական նյութերի տրամադրումը, տարածումը, ուսուցողական գործունեության ծավալումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրողները եւ բաշխողները լիազոր մարմնի հետ համաձայնեցված մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին տեղեկատվություն տրամադրում են բուժաշխատողներին, եթե այդ տեղեկատվությունը սահմանափակվում է գիտական եւ փաստացի նյութերով, որոնք վերաբերում են մանկական սննդի եւ հարակից ապրանքների հատկանիշերի գիտական ասպեկտներին, օգտագործման եղանակներին.

Հոդված 16. Բուժաշխատողների կողմից մանկական սննդի վաճառքի եւ խրախուսման արգելքը

1. Արգելվում է բուժաշխատողի կողմից՝

1) մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքով, իրացման, զովագրի կամ խրախուսման այլ ձևերով զբաղվելը,

2) արտադրողից եւ բաշխողից, կամ նրանց անունից հանդես եկող այլ կազմակերպությունից որեւէ նվեր, շնորհ կամ պարգև՝ դրամական կամ որեւէ այլ տեսքով ընդունելը,

3) մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելը,

4) մանկական սննդի օգտագործման ցուցադրելը, բացառությամբ առանձին մայրերին կամ նրանց ընտանիքների անդամներին ցուցադրելը այն դեպքում, երբ մանկական կաթնախառնուրդով կերակրելը անհրաժեշտ է ելնելով բժշկական ցուցումներից կամ եթե մայրը ընտրել է մանկական սնունդով սնուցումը: Բուժաշխատողը պարտավոր է մորը տրամադրել տեղեկատվություն մանկական սննդի օգտագործման հետեւանքով հնարավոր վնասների վերաբերյալ:

Հոդված 17. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների անվճար կամ ցածր գներով տրամադրումը

Մանկական սնունդը եւ հարակից ապրանքները լիազոր մարմնի հետ համաձայնեցված անվճար կամ ցածր գներով կարող են տրամադրվել՝

- 1) ծնողական խնամքից զուրկ մնացած երեխաների համար,
- 2) բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաների համար,
- 3) մայրական կաթի բացակայության դեպքում,
- 4) մայրական կաթով սնուցման բժշկական հակացուցումներով դեպքում:

Գլուխ 6

Մանկական սննդի և հարակից ապրանքների պիտակներին ներկայացվող պահանջները

Հոդված 18. Մանկական սննդի պիտակներին ներկայացվող պահանջները

1. Մանկական սննդի պիտակները պետք է հայերեն լեզվով և ընթեռնելի տառաչափով պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) պատրաստման և օգտագործման հրահանգներ՝ բառերով և պատկերներով,
- 2) երեխաների տարիքային խումբը թվանշաններով, որոնց համար նախատեսված է մանկական սնունդը,
- 3) նախազգուշացում ոչ ճիշտ պատրաստման և այլ տարիքի երեխայի սնուցման հետ կապված հնարավոր առողջական վտանգների մասին,
- 4) բաղադրությունը և կաթ կամ փոխարինիչի ծագումը,
- 5) պահպանման պայմանները նախքան բացելը և դրանից հետո,
- 6) խմբաքանակի համարը, արտադրման ամսաթիվը և պիտանելիության ժամկետը,
- 7) արտադրողի և բաշխողի անվանումը , հասցեն և կապի միջոցները,
- 8) կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն լիազոր մարմնի կողմից սահմանված ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ նախազգուշացման տեքստ:
- 9) վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն նախազգուշացում այն մասին, որ կաթնախառնուրդը չպետք է օգտագործվի 6 ամսեկանից փոքր մանուկների համար:
- 10) կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն «կարեւոր նշում» բառերը՝ մեծատառերով և ստորել հետևյալ տեքստը. «ԿՐԾՔՈՎ ՄՆՈՒՑՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»:

2. Արգելվում է՝

- 1) մանկական կաթնախառնուրդների պիտակներին վրա տեղադրել կրծքով սնուցումը նսեմացնող կամ արհեստական սնուցումը գովաբանող բովանդակությամբ որևէ տեքստ,

2) մանկան կաթնախառնուրդների պիտակների վրա տեղադրել «մայրականացված», «մարդկայնացված» կամ կրծքի կաթի հետ այլ նմանականացում ենթադրող կամ համեմատող արտահայտություններ,

3) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել երեխայի նկարներ

4) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել դրանց պատրաստման եղանակների լուսաբանման հետ առնչություն չունեցող լուսանկարներ, նկարներ կամ այլ գրաֆիկական պատկերներ,

5) մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող մթերքի պիտակների նմանացումը մանկական կաթնախառնուրդների պիտակներին,

6) սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ մանկական սննդի վաճառքը կամ այլ կերպ իրացումը,

3. Սույն օրենքի հիման վրա կառավարությունը սահմանում է մանկական սննդի պիտակներին ներկայացվող պահանջները:

Հոդված 19. Հարակից ապրանքների պիտակներին ներկայացվող պահանջները

1. Հարակից ապրանքների պիտակները պետք է հայերեն լեզվով եւ ընթեռնելի տառաչափով պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

1) «Կարևոր նշում» բառերը՝ մեծատառերով եւ հետևյալ բովանդակությամբ տեքստը. «ԿՐԾՔՈՎ ՄՆՈՒՑՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐՆՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»,

2) լիազոր մարմնի կողմից սահմանված ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ նախազգուշացման տեքստեր,

3) Լվացման եւ ախտահանման հրահանգներ՝ բառերով եւ պատկերներով,

4) Արտադրողի եւ բաշխողի անվանումը , հասցեն եւ կապի միջոցները,

2. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ հարակից ապրանքների վաճառքը կամ այլ կերպ իրացումն արգելվում է,

3. Սույն օրենքի հիման վրա կառավարությունը սահմանում է հարակից ապրանքներին ներկայացվող պահանջները:

Գլուխ 7

Կրծքով սնուցման խրախուսման ոլորտում բժշկական հաստատությունների եւ բուժաշխատողների պարտականությունները

Հոդված 20. Բժշկական հասարարությունների եւ բուժաշխատողների պարտականությունները

1. Բժշկական հաստատությունները եւ բուժաշխատողները պարտավոր են ապահովել կրծքով սնուցման համար բարյացակամ միջավայրի ապահովումը բժշկական հաստատություններում, այդ թվում.

1) Խրախուսել եւ աջակցել կրծքով սնուցումը՝ որպես օպտիմալ եւ այլընտրանք չունեցող միջոց մանուկների եւ վաղ տարիքի երեխաների անվտանգ եւ համապատասխան (աղելվատ) սնուցում ապահովելու համար:

2) Խրախուսել եւ աջակցել ժամանակին եւ համապատասխան հավելյալ սնուցման ապահովումը:

3) Պահպանել սույն օրենքով եւ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կրծքով սնուցման կանոնները եւ պարբերաբար իրազեկել նշված կանոնների վերաբերյալ բժշկական անձնակազմին:

4) Իրազեկել հանրությանը, ներառյալ հղիներին, նրանց ընտանիքներին, երեխաներին խնամողներին եւ դայակներին կրծքով սնուցման առավելությունների եւ գործնական հմտությունների, արհեստական կաթնախառնուրդների օգտագործման եւ ոչ ճիշտ օգտագործման վտանգների վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ եւ հասանելի տեղեկատվություն:

5) Իրականացնել կրծքով սնուցման համար անհրաժեշտ գործնական հմտությունների դասընթաց բուժանձնակազմի համար:

6) Օգնել մայրերին սկսել կրծքով սնուցումը սկսած ծննդաբերության պահից:

7) Նորածիններին չտրամադրել ոչ մի տեսակ սնունդ կամ հեղուկ բացի կրծքի կաթից, բացառությամբ բժշկական ցուցումների:

8) Կիրառել ծննդատանը մոր եւ նորածնի համատեղ կեցությունը միեւնույն հիվանդասենյակում:

9) Նորածիններին չտրամադրել որեւէ հանգստացնող միջոց, ներառյալ ծծակներ:

10) Մանկական սննդի արտադրողներին եւ բաշխողներին չտրամադրել հղիների եւ կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ:

2. Մանկական սննդի արտադրողների եւ (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (սնունդ, նվեր կամ այլ շնորհի առաջարկ) կամ սույն օրենքի նորմերի այլ խախտումների դեպքում բուժաշխատողը կամ բժշկական հաստատությունը պարտավոր են գրավոր տեղեկացնել լիազոր մարմնին:

Գլուխ 8

Մանկական սնուցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը

Հոդված 21. Տեղեկատվական եւ ուսուցողական նյութեր մանկական սնուցման վերաբերյալ

1. Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը պետք է՝

1) լինեն հայերեն լեզվով եւ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այլ լեզուներով,

2) պարունակեն ճշգրիտ եւ արդի տեղեկատվություն եւ չպետք է օգտագործեն որեւէ նկար կամ տեքստ, որը խրախուսում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների օգտագործումը, շշով սնուցումը կամ չի նպաստում կրծքով սնուցմանը.

3) չներկայացնեն, թե մանկական սննդով սնուցելը կամ հարակից ապրանքներ օգտագործելը համարժեք է, համեմատելի է կամ գերազանցում է կրծքի կաթին կամ կրծքով սնուցմանը.

4) չպարունակեն մանկական սննդի եւ հարակից ապրանքների ֆիրմային անվանումներ ապրանքային նշաններ, կամ արտադրողի կամ բաշխողի անվանումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բուժաշխատողներին.

5) հստակ ներկայացնեն հետեւյալ տեղեկատվությունը.

ա) կրծքով սնուցման անհրաժեշտությունն ու առավելությունները,

բ) 6 ամիս բացառապես եւ դրան հետեւող շարունակական (երկու տարի եւ ավելի) կրծքով սնուցման կարեւորությունը,

գ) ինչպես սկսել եւ պահպանել բացառապես եւ շարունակական կրծքով սնուցումը, ներառյալ թե ինչու է դժվար փոխել կրծքով չկերակրելու որոշումը,

դ) 6 ամսականից սկսած հավելյալ սննդի տրամադրման կարեւորությունը,

ե) ինչու է շշով սնուցման կամ հավելյալ սննդի վաղ տրամադրումը բացասաբար ազդում կրծքով սնուցման վրա,

զ) տնային պայմաններում հավելյալ սննդի պատրաստումը:

Հոդված 22. Տեղեկատվական եւ ուսուցողական 'կյութեր' մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին

Մանկական սննդով սնուցման մասին գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական կյութերը բացի հոդված 12-ով սահմանված տեղեկատվությունից, պետք է ընդգրկեն նաեւ հետեւյալ տեղեկատվությունը.

1) հրահանգներ մանկական սննդի պատշաճ պատրաստման եւ օգտագործման վերաբերյալ, ներառյալ հարակից ապրանքների լվացումն ու ախտահանումը.

2) ինչպես կերակրել մանկանը կերակրման բաժակով.

3) շշով կերակրման եւ մանկական սննդի ոչ ճիշտ պատրաստման հնարավոր առողջական վտանգները.

Հոդված 23. Պատրաստանաւորությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

Սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 24. Մնացումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուններորդ օրը:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 251-րդ հոդվածի 1-ին մասը «հանգստանալու,» բառից հետո լրացնել «երեխաների կրծքով սնուցման,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**«Մանկամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Մանկամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ին ՀՕ-193-Ն օրենքի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության առանձնահատկությունները սահմանվում են «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի շրջանառության մասին» օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ մասով.

«11. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների անվտանգությանը, մակնշմանը եւ փաթեթավորմանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները սահմանվում են «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի շրջանառության մասին» օրենքով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-12153-28.07.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 17 մայիսի 2000 թվականի, ՀՕ-60 օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից» բառերից հետո լրացնել ««Երեխաների կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի շրջանառության մասին» օրենքից բխող պարտավորությունների կատարման ստուգումները եւ » բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-12154-28.07.2011--010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-197 օրենքի 11-րդ հոդվածում 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Մանկական կաթնախառնուրդների եւ հարակից ապրանքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը սահմանվում է «Երեխաների կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի շրջանառության մասին» օրենքով սահմանված պահանջների համաձայն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-12155-28.07.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին**

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական
իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-
ի ՀՕ-474-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Կինը իրավունք ունի տեղեկություն ստանալ կրծքով սնուցման առավելությունների,
ինչպես նաև մանուկների եւ վաղ տարիքի երեխաների առողջ եւ անվտանգ սնուցման
վերաբերյալ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-12156-28.07.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի
Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքը (այսուհետ՝ օրենսգրքը)
լրացնել հետևյալ բովանդակությամբ 47.7 հոդվածով.

«Հոդված 47.7 Մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության
կանոնները խախտելը՝

1. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը բժշկական
հաստատությունների կողմից՝

Առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի
հինգհարյուրապատիկի չափով:

2. Մինչև վեց ամսական մանուկների համար մանկան կաթնախառնուրդ չհանդիսացող
եւ իբրեւ այդպիսին ներկայացվող սննդամթերքի վաճառքը՝ առաջացնում է տուգանքի
նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

3. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների պահպանման համար
համապատասխան պայմաններ չունեցող առևտրային կետերի կողմից դրանց
վաճառքը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն
աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների գովազդը եւ խրախուսումը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգարյուրապատիկի չափով:
5. Բուժաշխատողի կողմից մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքով, իրացման, գովազդի կամ խրախուսման այլ ձեւերով զբաղվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
6. Բուժաշխատողի կողմից արտադրողից եւ բաշխողից, կամ նրանց անունից հանդես եկող այլ կազմակերպությունից որեւէ նվեր, շնորհ կամ պարգև՝ դրամական կամ որեւէ այլ տեսքով ընդունելը, մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:
7. Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների վերաբերյալ, գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական նյութերի պատրաստելը եւ տարածելը՝ օրենքի պահանջների խախտմամբ՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:
8. Սույն հոդվածի 1-7 մասերով սահմանված արարքները կրկին անգամ կատարելը՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում տվյալ արարքի համար սույն հոդվածի 1-7 մասերով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով»:
- Հոդված 2. Օրենսգրքի 44.14 հոդվածի 47.4 բառերից հետո լրացնել «47.7» բառերը:

Նախագիծ
Պ-12157-28.07.2011-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի N ՀՕ-55 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«6. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների գովազդը արգելվում է»:

Հոդված 2 .Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ինստուներորդ օրը:

Հիմնավորում

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման եւ մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Մանդամթերքի անվտանգության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» եւ ««Գովազդի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման:

Միավորված Ազգերի Կազմակերպության Հազարամյակի հռչակագրով սահմանված Հազարամյակի մարտահրավերների 8 նպատակներից 1-ը վերաբերվում է մանկական մահացության նվազեցմանը: Պարտավորությունը, որը ստանձնել է Հայաստանը՝ այն է նվազեցնել մանկական մահացությունը 2/3-ով առկա ռեսուրսների պայմաններում գնահատվել է դժվար հասանելի, իսկ գործուն միջոցառումների բացակայության դեպքում այն կարող է գնահատվել նույնիսկ անհասանելի:

Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ կրծքով սնուցման տարածումը կարող է աշխարհում տարեկան միլիոնավոր մանուկների կյանք փրկել: ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի գնահատականներով մինչեւ 6 ամսեկան տարիքը բացարձակ կրծքով սնուցում իրականացնելու դեպքում տարեկան կարելի է փրկել 1.3 մլն երեխա: Կրծքի կաթը գերադասելի է երեխային տրվող ցանկացած այլ սննդից, այն պարունակում է անհրաժեշտ սնուցողական նյութերը՝ լավագույն փոխհարաբերությամբ, ինպես նաեւ գործոններ, որոնք պաշտպանում են մանկանը հիվանդություններից: Հետազոտություններ ցույց են տվել, որ շշով սնվող մանուկները ավելի հաճախ են ծանր ինֆեկցիաներով վարակվում եւ հիվանդանում: Կրծքով սնվող երեխաները շշով սնվողների համեմատությամբ 25 անգամ ավելի փոքր հավանականություն ունեն կյանքի առաջին երկու ամիսների ընթացքում փորլուծությունից մահանալու: Ալերգիաները, մաշկային հիվանդությունները, ասթման եւ շատ այլ հիվանդություններ ավելի քիչ են հանդիպում կրծքով սնվող երեխաների շրջանում: Բոլոր փաստերը վկայում են, որ մանուկները պետք է սնվեն կրծքով, սակայն 20 -րդ դարում կրծքով սնուցումն անկում է ապրել:

Կրծքով կերակրման խրախուսման նախաձեռնությունը Հայաստանում սկսվել է դեռեւս 1993թ-ին: Ծրագիրը, որը հաստատվել էր ՀՀ ԱՆ կողմից 1994թ-ին, ենթադրում էր կրծքով կերակրման խրախուսման եւ աջակցման գործելակերպի խթանում բուժաշխատողների ու ծնողների շրջանում եւ հիմնարար կազմակերպակառուցվածքային փոփոխությունների իրականացում ծննդօգնության հաստատությունների մակարդակով: Ծրագրի առաջընթացը ակնհայտ է, սակայն 2000թ.-ին հաջորդող տարիների ցուցանիշի աճի տեմպերը զգալի նվազել են, իսկ 2006թ. նկարագրվել է նույնիսկ որոշակի իջեցում:

Մանկական սնունդ արտադրողները և բաշխողները, մանկական սննդի պահանջարկը մեծացնելու նպատակով, ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, օգտվելով օրենսդրության անկատարությունից կիրառում են խրախուսման և վաճառահանման այնպիսի եղանակներ, որոնք բացասաբար են ազդում կրծքով սնուցման ցուցանիշների վրա:

1981 թ. ԱՀԿ-ն և ՅՈՒՆԻՍԵՖ-ն ընդունել են Կրծքի կաթի փոխարինողների վաճառահանման միջազգային օրենսգիրքը, որը խորհրդատվական և ոչ պարտավորեցնող բնույթ ունի, բայց կառավարությունները և կաթնախառնուրդ արտադրող ընկերությունները ստորագրել են այն: Օրենսգիրքը պարտադրում է, որ բոլոր մայրերը ճշգրիտ տեղեկատվություն ստանան կրծքով սնուցման առավելությունների և արհեստական սնուցումից բխող հնարավոր հիվանդությունների մասին: Սույն օրենսգիրքը ադապտացրել և իրենց ազգային օրենսդրության մեջ են ներառել եվրոպական տարածաշրջանի երկրներից մեծամասնությունը:

Չնայած Հայաստանը նույնպես միացել է Կրծքի կաթի փոխարինիչների վաճառքի վերահսկման միջազգային օրենսգրքին, սակայն միայն որոշ դրույթներ են ընդունվել «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, որտեղ այլ ազգային օրենսդրություն, որը կապահովեր օրենսգրքի իրականացման անհրաժեշտ վերահսկում, դեռևս չի ընդունվել:

«Երեխաների կրծքով սնուցման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի ընդունումը նպատակ է հետապնդում կարգավորել երեխաների կրծքով սնուցման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների հետ կապված հարաբերությունները: Օրենքի ընդունմամբ նաև կկարգավորվեն մանկական սննդի և հարակից ապրանքների արտադրության, պիտակավորման, վաճառքի, բաշխման, գովազդի և որտեղ այլ ձևով խրախուսման, ինչպես նաև դրանց մասին իրազեկման և տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը կնպաստի երեխայի սնուցման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը և այն գործոնների վերացմանը, որոնք խոչընդոտում են կրծքով սնուցման խրախուսումը՝ օրենսդրորեն ամրագրելով այդ բնագավառին առնչվող միջազգային փորձն ու պահանջները: